Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 24-ի N 280 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2011

11_0280

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ հանրապետությունում 2005-2008 թվականներին եգիպտացորենի ընդհանուր ցանքատարածությունները կազմել են համապատասխանաբար՝ 3853, 3238, 4086 և 4241 հեկտար: Ցանքատարածությունների ավելացումը կատարվել է ի հաշիվ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրված պետական աջակցության և Վրաստանից ներկրված 41,5 տոննա բարձր վերարտադրության սերմացուների ներկրման, որը բաշխվել է հանրապետության բոլոր մարզերին: 2009 և 2010 թվականներին ցանքատարածությունները համապատասխանաբար կազմել են 3072 և 3102 հեկտար, ցանքատարածությունների կրճատումը հետևանք է պետական աջակցության տրամադրման դադարեցման և որակյալ սերմացուների պակասի: 2010 թվականի ընթացքում հանրապետություն է ներկրվել 138,9 տոննա պարենային և 49135 տոննա հատիկախառն (կերային) եգիպտացորեն:

2. Թռչնաբուծության և անասնապահության ներկա զարգացման պայմաններում հանրապետությունը խիստ կարիք ունի եգիպտացորենի ցանքատարածությունների ընդլայնման և համախառն բերքի ավելացման:

3. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես գիտական կենտրոնները, այնպես էլ մասնավոր տնտեսությունները գրեթե չեն զբաղվում եգիպտացորենի բարձր վերարտադրության սերմացուների կամ հիբրիդների արտադրությամբ:

4. Ցանքի համար օգտագործվող սերմացուները հիմնականում ունեն անհայտ ծագում, ցածր որակ և անհայտ վերարտադրություն:

5. Վերջին 10 տարվա ընթացքում սորտաթարմացման և սորտափոխանակման նպատակով պետության կողմից հանրապետություն է ներկրվել ընդամենը 141.5 տոննա եգիպտացորենի բարձր վերարտադրության սերմացու: Առանձին տնտեսավարողների

կողմից ներկրվող սահմանափակ քանակությամբ սորտերի և հատկապես հիբրիդների սերմացուները՝ բարձր արժեքի պատճառով մատչելի չեն տնտեսավարող սուբյեկտների համար:

6. Յուրաքանչյուր տարի հանրապետությունում օգտագործվում է 95-100 տոննա եգիպտացորենի սերմացու:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի նպատակը հանրապետությունում եգիպտացորենի ցանքատարածությունների և համախառն բերքի ավելացումն է:

8. Ծրագրի խնդիրն է արտերկրից 63 տոննա եգիպտացորենի հիբրիդային սերմացուի գնումը, ներկրումը և հանրապետության՝ եգիպտացորենի մշակությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին տրամադրումը:

9. Եգիպտացորենի սերմացուն կտրամադրվի Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Լոռու, Սյունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերին:

III. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

10. Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները նախատեսված են 2011 թվականի համար:

Իրականացվող միջոցառումները

11. Նախատեսվում է հանրապետություն ներմուծել արտերկրում գրանցված, երաշխավորված կայուն և բարձր բերք ապահովող եգիպտացորենի հիբրիդի 63 տոննա սերմացու և հատկացնել հանրապետության մարզերի եգիպտացորենի արտադրությամբ զբաղվել ցանկացող տնտեսավարող սուբյեկտներին՝ բերքահավաքից հետո տրված

սերմացուի կրկնակի քանակությանը համապատասխան (1:2 փոխհարաբերությամբ) մեկ կիլոգրամի համար 100 դրամ հաշվարկով գումարը վերադարձնելու պայմանով:

12. Սերմացուն տնտեսավարող սուբյեկտին կհատկացվի մարզպետի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

13. Սերմացուն կբաշխվի ըստ մարզերի՝ հետևյալ չափաքանակներով.

Մարզը	Գործակցով հաշվարկված կշիռը (տոննա)
Արագածոտն	5
Արարատ	10
Արմավիր	12
Լոռի	9
Սյունիք	1
Վայոց ձոր	1
Տավուշ	25
Ընդամենը	63.00

14. Բաշխումից հետո Հայաստանի Հանրապետության մարզպետարանները 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն կներկայացնեն վերջնական ցուցակները՝ համաձայն ձևի:

15. Սերմացուն կհատկացվի 0.3 և ավելի հողատարածք ունեցող տնտեսավարողներին՝ առաջնությունը տալով՝

1) սոցիալապես անապահով ու մեկ տարի և ավելի չմշակված հողատարածքներ ունեցող տնտեսավարողներին.

2) սոցիալապես անապահով տնտեսավարողներին.

3) մեկ տարի և ավելի չմշակված հողատարածքներ ունեցող տնտեսավարողներին:

16. Սույն հավելվածի 15-րդ կետով նախատեսված պայմանները բավարարելուց հետո ավելացված սերմացուն հանձնվում է այլ տնտեսավարող սուբյեկտների՝ մարզպետի հայեցողությամբ:

17. Եգիպտացորենի սերմացուի բաշխումն իրականացվելու է մեկ հեկտարին 25 կիլոգրամ ցանքի նորմայով:

18. Ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից կիրականացվի մոնիթորինգ, որը կսկսվի սերմացուի բաշխման պահից և կշարունակվի մինչև բերքահավաք:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

19. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) ագրոպարենային ոլորտում աշխատատեղերի պահպանումը և նոր աշխատատեղերի ստեղծումը.

2) երկրի ագրոպարենային համակարգում համեմատաբար կայուն իրավիճակի ձևավորումը.

3) եգիպտացորենի մշակության եկամտաբերության բարձրացումը, ցանքատարածությունների ընդլայնումը և համախառն բերքի ծավալների ավելացումը:

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. Ծրագրի իրականացման ընթացքում վերադարձվող գումարները նպատակաուղղել հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալների ընդլայնմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության ..... մարզի ..... տարածաշրջանի ..... համայնքի եգիպտացորենի հիբրիդային սերմացու ստացողների

NN ը/կ	Անունը, ազգանունը	Անձնագիրը		Անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքի գրանցման վկայականի համարը		Հողատարածքի չափը (հա)	Տրամադրված սերմացուի քանակը (կգ)	Ստորագրությունը
		համարը	տրված է (օրը, ամիսը, տարեթիվը, ում կողմից)	սեփական	վարձակալական			
1.								
2.								
3.								
4.								
5.								
6.								
7.								
Ընդամենը		x	x	x	x			x

Համայնքի ղեկավար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Մարզպետարան

11_0280